Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, Գ.Խ. Նախագահ

_________ Ն. Խ. Մաքիբեկյան

«___» ________ 20/4թ.

ԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգը սահմանում է Համալսարանի ուսումնական պլաններով նախատեսված ընտրովի դասընթացների ընտրության և կազմակերպման կարգը:

1.2 Ընտրովի դասընթացների ընտրության և կազմակերպման հիմքում դրված է կրեդիտային համակարգով ուսուցման կարգը, սույն կարգը և կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր:

II. Ընտրովի դասընթացների ընտրություն

2.1 Գործող կրեդիտային համակարգի պահանջներից ելնելով համալսարանի կրթական ծրագրերում ընդգրկված է ընտրովի կրթական դասընթացների համակարգ:

2.2 Ընտրովի դասընթացներն ընդգրկված են ուսումնական պլաններում, համապատասխան ժամաքանակով և կրեդիտով:

2.3 Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար նախատեսված է մեկ ընտրովի դասընթաց, որի համար առաջադրվում է երկու ընտրովի դասընթացի անվանում, երկու ընտրովի դասընթացի համար՝ առնվազն չորս դասընթացի անվանում և այլն

III. Ընտրովի դասընթացների իրականացման գործընթացը

3.1 Համալսարանի ուսումնական մասը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ուսանողներին է ներկայացնում ընտրովի դասընթացների ծրագրերը, համառոտագրերը, ընտրության պայմանները՝ ներկայացված դասընթացներից քանիսը պետք է ընտրվեն:

3.2 Անհրաժեշտության դեպքում ընտրությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, դասընթացների բովանդակությունը մանրամասնորեն ներկայացվում է ուսանողներին:

3.3 Յուրաքանչյուր ուսումնական խումբ առանձին ընտրովի դասընթացներ ուսումնասիրելու նպատակով կարող է բաժանվել երկու և ավելի խմբերի:

3.4 Տվյալ ընտրովի դասընթացը կայանում է, եթե գրանցվել է առնվազն 10-12 ուսանող: Հակառակ դեպքում՝ տվյալ դասընթացին գրանցված փոքրաթիվ ուսանողներին կառաջարկվի միանալ որևէ կայացած խմբի: